Հաստատված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի գիտական

խորհրդի 2023 թվականի Հունիսի 23-ի թիվ 4 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝

Ռեկտոր Սիրուհի Գնդեղյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1.Ընդհանուր դրույթներ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (այսուհետև՝ ՀՊՄՀ) ուսանողների մասնագիտական պրակտիկան (այսուհետև՝ պրակտիկա) կազմակերպվում և իրականացվում է պահպանելով կրթական գործընթացի անընդհատության, հաջորդայնության և շարունակականության սկզբունքը:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են ՀՊՄՀ պրակտիկայի կազմակերպման կարգը, պրակտիկայի տեսակները, պրակտիկայի կազմակերպման գործընթացին ներգրաված անձանց գործառույթները և գնահատման կարգը:

3. Պրակտիկան ուսանողի հիմնական կրթական ծրագրի բաղադրիչն է:

4.Պրակտիկան ուսումնական գործունեության տեսակ է, որի բովանդակությունը ուսումնական, հետազոտական, գիտական, մանկավարժական, ստեղծագործական բնույթի գործունեության իրականացումն ու գործնական խնդիրների լուծումն է՝ մասնագիտությանը համապատասխանող գործունեություն իրականացնող կազմակերպություններում և համապատասխան պետական (համայնքային) մարմիններում (այսուհետև՝ պրակտիկայի բազա):

5. Պրակտիկայի նպատակը ուսանողների կոմպետենցիաների զարգացումն է, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների ձևավորումը կոնկրետ գործունեության ընթացքում, ինչպես նաև ուսումնական նախագծերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների համար ուսումնական ռեսուրսների հավաքագրումն ու ընդհանրացումը:

6. Պրակտիկայի ղեկավարումն իրականացվում է ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոնի, համապատասխան ֆակուլտետի, մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի և/կամ պրակտիկայի բազայի կողմից նշանակված համապատասխան մասնագետների միջոցով:

1. Պրակտիկայի կազմակերպումը

7. Պրակտիկան կազմակերպվում և իրականացվում է ՀՊՄՀ ռեկտորի հրամանով և պրակտիկայի բազայի հետ կնքված պրակտիկայի պայմանագրի և ուսումնական պլանի հիման վրա:

8. Պրակտիկայի անցկացման ժամկետները սահմանվում են ՀՊՄՀ ֆակուլտետների ուսումնական պլանների և պրակտիկայի առարկայական նկարագրի (ծրագրի) հիման վրա՝ հաշվի առնելով կրթական գործընթացի անընդհատությունը, համակարգայնությունը, շարունակականությունը, ուսանողների տեսական պատրաստվածությունը և ֆակուլտետի պրակտիկայի ժամանակացույցը, պրակտիկայի բազայի տեխնիկական հնարավորությունները:

9. Պրակտիկայի առարկայական նկարագրերի ձևանմուշը մշակում է ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոնը:

10. Մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնները մշակում են իրենց մասնագիտությունների գծով պրակտիկայի առարկայական նկարագրերը՝ դրանք համաձայնեցնելով ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոնի հետ:

11. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս, քան 15 օր առաջ համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի պատասխանատուն (ղեկավարը) պրակտիկայի բազային տեղեկացնում է պրակտիկայի մեկնող ուսանողների նախնական թվի, պրակտիկայի ժամկետների, նյութատեխնիկական ապահովման անհրաժեշտ պայմանների մասին:

12. Պրակտիկայի պատասխանատուները սահմանվում են ուսումնական ծանրաբեռնվածությամբ (կրթական ծրագրի պրակտիկայի պատասխանատու, մեթոդիստ, հոգեբան, մանկավարժ) և որպես կանոն, նշանակվում են ՀՊՄՀ այն դասախոսները, որոնք ունեն մասնագիտական, առարկայական և մեթոդական բարձր պատրաստվածություն, հետազոտական աշխատանքի փորձ, տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին, ունեն հաղորդակցման զարգացած կարողություններ:

13. Պրակտիկան սկսվելուց առաջ համապատասխան ֆակուլտետը ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոն է ներկայացնում ուսանողների պրակտիկայի կազմակերպման

մասին համապատասխան զեկուցագիրը՝ հիմք ընդունելով ուսումնական պլանը և ֆակուլտետի պրակտիկայի ժամանակացույցը: Նշված զեկուցագրի հիման վրա ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոնը կազմում է Համալսարանի ռեկտորի հրամանի նախագիծ կամ համապատասխան փոփոխություններ է առաջարկում (կատարում) ֆակուլտետին կատարել համապատասխան զեկուցագրերում:

14. Ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով, ֆակուլտետի խորհուրդը կարող է մասնակի փոփոխել պրակտիկայի ժամանակացույցը՝ ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոնին տեղեկացնելով և ներկայացնելով քաղվածք՝ ֆակուլտետի խորհրդի համապատասխան արձանագրությունից:

15. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս, քան 7 օր առաջ ֆակուլտետներում կազմակերպվում է նախապատրաստական հանդիպում ուսանողների հետ (նախապատրաստական կոնֆերանս), որի ընթացքում մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի պատասխանատուն ուսանողներին տրամադրում է պրակտիկայի հիմնական փաստաթղթերի փաթեթը (թղթապանակ, աշխատանքային տետրեր, հաշվետվության ձև, անհատական աշխատանքի պլանի ձև և այլն), պարզաբանում է աշխատանքի պայմանները և պահանջները:

16. Պրակտիկայի ընթացքում ծրագրով նախատեսված ժամաքանակի կեսից ավելիին չներկայացած, պրակտիկայի արդյունքում անբավարար գնահատականներ ստացած, պարբերաբար աշխատանքային կամ անվտանգության նորմերը խախտած ուսանողները համարվում են պրակտիկան չանցած, և պրակտիկայի մեթոդիստն այդ մասին տեղյակ է պահում մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի պատասխանատուին:

17. Պրակտիկան չանցած ուսանողներին տրվում է ևս մեկ հնարավորություն՝ հաշվի առնելով ընթացիկ ուսումնական ծանրաբեռնվածությունը և հենվելով պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի հիմնական դրույթների վրա:

18. Հնարավորության առկայության դեպքում ուսանողներին տրվում է ևս մեկ հնարավորություն պրակտիկան կազմակերպելու նույն կիսամյակում, իսկ նման պայմանների բացակայության դեպքում՝ ոչ ուշ քան հաջորդ կիսամյակի ավարտը: Կրկնակի պրակտիկայի մասին որոշումն ընդունում է ֆակուլտետի խորհուրդը, որի հիման վրա ֆակուլտետի դեկանը ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոն է ներկայացնում

առաջարկություն պրակտիկայի կազմակերպման վայրի, ժամկետների և պատասխանատուների վերաբերյալ:

19. Անհատական կարգով պրակտիկան, որպես կանոն, կարող է կազմակերպվել ՀՊՄՀ-ի ռեկտորի հրամանով՝ այն կազմակերպություններում, որոնք մինչև պրակտիկայի կազմակերպումն առնվազն 20 աշխատանքային օր առաջ ներկայացրել են անհատական պրակտիկայի կազմակերպման համապատասխան պահանջագիր-հայտ և ՀՊՄՀ-ի հետ ունեն կնքված պրակտիկայի կազմակերպման մասին համապատասխան պայմանագիր՝ բացառությամբ հետազոտական պրակտիկայի: Անհատական պրակտիկայի համար կարող են դիմել սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները, ինչպես նաև ՀՊՄՀ-ի ռեկտորի հրամանով այլ բացառիկ կարգավիճակ ունեցող ուսանողները:

20. Անհատական պրակտիկա, որպես կանոն, կազմակերպվում է այն ուսանողների համար, որոնք՝

ա) բնակվում են հեռավոր շրջաններում: Այս դեպքում պրակտիկան կարող է կազմակերպվել տվյալ բնակավայրում գտնվող համապատասխան կազմակերպությունում կամ համապատասխան պետական կառույցներում՝ 19-րդ կետով սահմանված կարգով.

բ) հանդիսանում են սահմանված կարգով նպատակային տեղերում ընդունված ուսանող (պրակտիկան կազմակերպվում է համապատասխան հայտ ներկայացրած դպրոցում) 19-րդ կետով սահմանված կարգով.

գ) հղի են կամ ունեն մինչև երկու տարեկան երեխա՝ 19-րդ կետով սահմանված կարգով.

դ) ունեն կրթական առանձնահատուկ պայմանների կարիք՝ 19-րդ կետով սահմանված կարգով.

ե) աշխատում են իրենց մասնագիտությամբ: Այս դեպքում պրակտիկան անցկացվում է այն կազմակերպությունում, որտեղ նրանք աշխատում են՝ 19-րդ կետով սահմանված կարգով.

զ) կրթությունը շարունակում են ակադեմիական շարժունության, վերականգնվել կամ շարունակել են իրենց ընդհատած ուսանողական իրավունքները՝ 19-րդ կետով սահմանված կարգով.

է) իրականացնում են հետազոտական աշխատանք մագիստրատուրայի հետազոտական պրակտիկայի շրջանակներում: Այս դեպքում պրակտիկայի անցկացումը կարող է չհրամանագրվել և կազմակերպվում է անհատական հետազոտական պլանի և առարկայական նկարագրի հիման վրա:

21. Անհատական պրակտիկայի կազմակերպման դիմում-հայտ ներկայացնող ուսանողները կից պետք է ներկայացնեն սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

22. Պրակտիկայից վերադառնալուց հետո առնվազն 7, առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ֆակուլտետներում կազմակերպվում է պրակտիկայի ամփոփիչ հանդիպում (կոնֆերանս): Կոնֆերանսի ընթացքում ֆակուլտետի (կրթական ծրագրի) պատասխանատուն ամփոփում է պրակտիկայի արդյունքները:

2. Պրակտիկայի տեսակները

23. ՀՊՄՀ–ում իրականացվում են պրակտիկայի հետեւյալ տեսակները.

ա) **Ուսումնական պրակտիկա**, որը, որպես կանոն, կազմակերպվում է տարբեր կազմակերպություններում և միտված է զարգացնելու բակալավրի ուսանողների գիտելիքներն ու կարողությունները իրենց մասնագիտական կամ հարակից ոլորտներում:

բ) **Մանկավարժական պրակտիկա**. կազմակերպվում է որպես կանոն, կրթական գործունեություն իրականացնող կամ հարակից ոլորտի կազմակերպություններում և միտված է զարգացնելու ուսանողների՝ մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունները:

գ) **Հետազոտական պրակտիկա**. ուսումնական պրակտիկայի տեսակ է, որը, որպես կանոն, կազմակերպվում է անհատական կարգով և բխում է ուսանողի մագիստրոսական թեզի պահանջներից ու բովանդակությունից և անհատական հետազոտական աշխատանքի պլանից:

դ) **Մանկավարժահետազոտական պրակտիկա**. մանկավարժական պրակտիկայի տեսակ է, որը որպես կանոն, կազմակերպվում է բարձրագույն ուսումնական

հաստատություններում, մանկատներում, տարբեր հոգեբանական կենտրոններում, միտված է մագիստրատուրայի ուսանողների մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունների զարգացմանը:

4. Ֆակուլտետի պրակտիկայի պատասխանատուների գործառույթները.

24. Ֆակուլտետի պրակտիկայի կազմակերպման և հսկողության համար անմիջական պատասխանատվություն կրում է ֆակուլտետի դեկանը և համապատասխան մասնագիտական ամբիոնները:

25. Ուսումնական ծանրաբեռնվածության հաստատված չափորոշիչներով կարող են նշանակվել կրթական ծրագրի պրակտիկայի այլ պատասխանատուներ:

26. Յուրաքանչյուր ուսումնական տարում ֆակուլտետի խորհրդի որոշմամբ պետք է նշանակվի ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար և յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի պատասխանատու:

27. Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարը, կրթական ծրագրերի պրակտիկայի ղեկավարների հետ համատեղ (առկայության դեպքում), իսկ վերջիններիս բացակայության դեպքում միանձնյա՝

ա) կազմում և յուրաքանչյուր տարվա սկիզբը ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոն է ներկայացնում ֆակուլտետի կողմից հաջորդ ուսումնական տարում կազմակերպվող բոլոր պրակտիկաների տարեկան ժամանակացույցը՝ հենվելով ուսումնական պլանների վրա, ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարների ցանկը և նախընտրելի բազա հանդիսացող կազմակերպությունները:

բ) նախապատրաստում է պրակտիկայի մասնակցող ուսանողների հրամանագրման գործընթացը.

գ) կազմակերպում է ֆակուլտետի պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ կոնֆերանսները.

դ) ֆակուլտետի խորհրդում նախապատրաստում և ներկայացնում է պրակտիկայի գործընթացին վերաբերող հարցերը.

ե) վերահսկում և համակարգում է պրակտիկայի մեթոդիստի, մանկավարժի, հոգեբանի և այլ պատասխանատուների գործունեությունը.

զ) Համապատասխան կազմակերպություններից պրակտիկայի ղեկավարման մեջ ընդգրկված աշխատողների վարձատրությունն իրականացնելու նպատակով ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոն է ներկայացնում համապատասխան ֆինանսական փաստաթղթեր (հարկային հաշիվ, կատարողական ակտեր, տեղեկագրեր, հաշվառման թերթեր և այլն).

է) վերահսկում և գնահատում է պրակտիկայի ընթացքը և արդյունավետությունը, ամփոփում է ամբիոնների պրակտիկայի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները և ներկայացնում պրակտիկայի կենտրոն:

28. Ֆակուլտետների պրակտիկայի մյուս պատասխանատուների գործառույթները սահմանվում են մասնագիտական կրթական ծրագրերով և համապատասխան ընթացակարգերով:

29. Մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի պատասխանատուները յուրաքանչյուր պրակտիկայի ավարտին պետք է ամբիոն ներկայացնեն հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին:

5. Պրակտիկայի գնահատման կազմակերպումը

30. Պրակտիկայի ավարտից հետո ոչ ուշ, քան 2 շաբաթյա ժամկետում՝ ֆակուլտետում կազմակերպվում է ուսանողների պրակտիկայի արդյունքների գնահատում՝ պրակտիկայի մեթոդիստ-ղեկավարի կողմից՝ համաձայն հաստատված առարկայական նկարագրի գնահատման չափանիշների:

31. Պրակտիկայի գործընթացի արդյունավետության գնահատումն իրականացվում է մասնագիտական կրթական ծրագրի և ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարի կողմից՝ նախապես մշակված չափանիշների և կրթական գործընթացի որակի գնահատման չափանիշների և ուղենիշների հիման վրա:

32. Ուսանողների պրակտիկայի և պրակտիկայի գործընթացի գնահատման արդյունքները պետք է քննարկվեն մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետների խորհուրդներում յուրաքանչյուր կիսամյակի վերջում և ամփոփ ներկայացվեն ֆակուլտետի պրակտիկայի կիսամյակային և տարեկան հաշվետվության մեջ՝ համաձայն նախօրոք մշակված ձևանմուշի:

33. Պաշտպանության արդյունքների մասին ամփոփ տեղեկությունները 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՀՊՄՀ-ի պրակտիկայի կենտրոն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի կողմից: